

գրած է, էջ III—VIII.) Հայոց այն ատեն Մոլտաւիայի մէջ ունեցած վիճակին վրայ հայեցումս մ'արձակել:

“Հայք ԺԳ. դարուն մէջ — ազատելով այն անօրինակ տարաբախտութենէն, որ իրենց հայրենեացն հասաւ, — խմբովին դէպ ի հիւսիս պանդխտեցան: Խորմեան թերակողին ժողովուրդ լեցուցին. եւ հարաւային Ռուսաստանէն անցնելով՝ դէպ ի արեւմուտք ալ սկսան պանդխտիլ: ԺԳ. եւ ԺԵ. դարերուն մէջ կը գտնենք զիրենք Բոտոլեան կամենիցի<sup>1</sup>, կալիցիայի, Գրանսիլուանիայի, Պուգովինայի եւ Մոլտաւիայի մէջ:

“Իրենց հետ ի սկզբան բարեկամաբար վարուեցան դաւառաց մէջ: Սակայն աղատածները քիչ ժամանակ ետքը ժողովուրդեան մոլեռանդութեան ամէն հետեւանքները զգալու հարկադրեցան . . . :

“Մոլտաւիայի մէջ ԺԶ. դարուն կէսերը Ստեփան Ղլոյտտա, իրեն գլխաւոր նպատակ ըրաւ զՀայերն յունադաւան կրօնին դարձնել:

“Պ. Ա. Սէրգու յաջորդ տեղեկութիւնները կու տայ մեզի այս շրջանին վրայօք. (Եասսի 1852. Ա. շատ. էջ 174—175.): “Պետրոս Ռարէս՝ բարի եւ հոյակապ իշխանին մահուանէն ետեւ (1544 Մայ. 15) իւր երէց որդին Իլիաս ընտրուեցաւ Ղլոյտտա կամ Կոստոտար: Ասոր խռովայոյզ իշխանութիւնը միայն 4 տարի եւ ութ ամիս տեւեց. (1547—1551.) որովհետեւ իւր վարչութիւնը թողլով՝ Կոստանդնուպոլիս գնաց եւ հոն մահմետական կրօնն ընդունեցաւ: Իլիայի տեղ Պետրոսի կրտսեր որդին Ստեփան եղաւ Ղլոյտտա. (1551 Յունիս 15էն մինչեւ 1552 Սեպտ.) Ժողովուրդն իրմէն շատ բան կը սպասէր, վասն զի կը յուսար թէ հօրը ճամբան պիտի երթայ եւ պատուաւոր վարչութիւն մը պիտի ունենայ: Եւ իրօք ալ, Ստեփան՝ որպէս զի եղբօրը խաւարին գործքերը ժողովուրդեան յիշատակէն ջնջէ, — ինչպէս Գրիգոր Ռարէսէա տարեգրողը կ'ըսէ, — ինք զինք ի սկզբան ամէնուն լաւազգած, ողորմած ու խոնարհամիտ ցուցուց: Մէկ գիէն եղբօրը չար յիշատակը մոռցընել տալու համար, մեկալ գիէն ալ որպէս զի որթոտքս հաւատքին հակառակող բան մը չըլլայ՝ իր իշխանութեան տակ եղած ամէն դաւանանքներն ուղեց — ընդ պատժով աքսորանաց — յունադաւան կրօնին դարձնել: — Հայերը վերստին մկրտել տուաւ,

եւ իւր հաւատքին դարձուց: Առանձնականաց՝ որոնք կամովին դարձան յունադաւանութեան, հարուստ պարգեւներ տուաւ եւ շատ բան խոստացաւ:

“Այս ըսուածներէն բաւականապէս կը տեսնենք Ստեփան Ղլոյտտային ով ըլլալը: Հաշտեալ “Հաւատոյ հանդուրժանաց պատմութիւնն ի Ռումանիա” (Histoire de la tolérance religieuse en Roumanie, Bucarest. 1876,) անուշով գրքին մէջ (էջ 76) մեր՝ վերն ըսածները կը կրկնէ: Բաց անկէ՝ մասնաւոր դէպք մըն ալ կը պատմէ անոր կեանքէն: Ce qu'il y a de plus curieux, k'ըսէ, c'est que ce prince aimait une arménienne, dont il eut un fils, qui fut le prince Jeanle-Cruel, si célèbre par ses exploits. (Ամէնէն զարմանալին այն է, որ այս իշխանը հայ կին մը սիրեց, որմէ որդի մ'ունեցաւ, որ է՝ իւր քաջագործութեամբ այնպէս համբաւաւոր Յովհաննէս Անդուլթն:) Ասկէ ետեւ ըսածը, քիչ մը չափազանց կ'երեւայ. On serait tenté d'expliquer cette persécution contre le rite arménien psychologiquement, non par la folie, qui troublait les esprits du prince, mais par le fanatisme d'une amante convertie à l'orthodoxie. —

“Ստեփան Ղլոյտտային կարճատեւ կառավարութիւնն ի բաց առնելով, Հայերն, ինչպէս Հաշտեալ կ'ըսէ, միշտ վայելեցին հաւատոյ ազատութիւն եւ քաղաքական արտօնութիւններ:

“Այս մեր հրատարակած հատակոտորն ճըշդիւ նոյն շրջանին հաւատոյ հալածանաց վրայ է: Ռոստաւորին սկիզբն, ինչպէս ըսինք, կորսուած է: Մեր (այս ինքն Պատկանեանին) հատակոտորը կը սկսի անկէ՝ որ Ստեփան Ղլոյտտայի հրամանան Հայ ժողովուրդը քաշկրտելով՝ Ղիստեռնին (գանձապետին) առջեւը տարին, որ իրենց հրամայեց՝ թէ անյապաղ յունադաւան կրօնն ընդունին: Խրատներն ու սպառնալիքները բաւական չեղան: Աւելի խիստ միջոցներ սկսան գործադրուիլ: Հայերը ծեծեցին, հրով տանջեցին ու նաեւ կենդանի այրեցին: Երբ այս սաստիկ միջոցներն ալ ըստ բաւականի շուտ չազդեցին, հրամայուեցաւ (Սուլապայի) Հայոց, որ մեկտեղ ժողովին — վոյթերը, պրուկարները, քահանաները, կանայք ու տղաք, — եւ բռնութեամբ զիրենք նորէն մկրտեցին: Եպիսկոպոսին եւ քահանայից՝ յառաջ մօրուքներն ածիլեցին, եւ զանոնք այս կերպով անարգելէն ետեւ՝ վրանին ղալաքի հագուստներ անցուցին եւ գլուխնին Դուլթն գրին: Այս միջոցին վալաք քահանան գնաց աներնին, զանոնք օրհնեց, անօթներն

<sup>1</sup> Բոտոլեան կամենիցի գանազանեւու ենք Բոհեմեան՝ Սլավոնեան եւ այլ բազմաթիւ կամենիցներէն: